ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«____» _____ 2018 թ. N _____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գյուղատնտեսական հումք վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N 49-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում և որոշմամբ հաստատված կարգի վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ» բառով.

2) որոշման տեքստում և որոշմամբ հաստատված կարգում, բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

3) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել՝

1) Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական հումք վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման կարգը՝ համաձայն հավելվածի.

2) Արցախի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկի փոխատուցում ստանալու նպատակով վերամշակման ենթակա գյուղատնտեսական հումքերի ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի:».

4) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 2-րդ կետում «, հացահատիկի թեփ և այլ մշակված հացահատիկներ (թեփահանած, տափակեցրած, փաթիլների վերածած, ծեծած, մանրաձավարի տեսքով կամ մանրատած)» բառերը փոխարինել «և հացահատիկի թեփ» բառերով,

բ. 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ ենթակետերով.

«2.1) ***գյուղատնտեսական գործունեություն՝*** գյուղատնտեսական մթերքների արտադրություն, փաթեթավորում, տարայավորում, պահեստավորում, տեղափոխում, շուկայահանում և դրանց առնչվող ծառայությունների մատուցում.

2.2) ***գյուղատնտեսական հումք՝*** գյուղատնտեսական գործունեության ընթացքում արտադրված բուսական կամ կենդանական ծագման հումք, որն աշխատանքի ազդեցությամբ կրել է որոշակի փոփոխություններ և ենթակա է հետագա վերամշակման»,

գ. 9-րդ կետից հանել «, բայց ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը,» բառերը և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Փոխհատուցումներ չեն կարող իրականացվել, եթե դրանք վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:».

4) որոշումը լրացնել նոր N 1 հավելվածով՝ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված ժամկետում չներկայացված փաստաթղթերը կարող են ներկայացվել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, բացառությամբ եթե դրանք վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է երեք տարի:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ		
3.	ԱՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		
4.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
5.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____

_____

_____

_____

_____

_____

_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2018 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի _____ ___-ի
N _____ -Ն որոշման

«Հավելված N 1
Արցախի Հանրապետության կառավարության
2015 թվականի փետրվարի 12-ի
N 49 -Ն որոշման

ՑԱՆԿ
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԵՐԻ

Բուսական ծագման գյուղատնտեսական հումքեր

1. Յուղատու մշակաբույսեր (արևածաղիկ, սոյա, կտավատ և հլածուկ)
2. Հատիկային կուլտուրաներ՝ հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի, վարսակ և աշորա), կորեկանման մշակաբույսեր (կորեկ, սորգո, եգիպտացորեն և բրինձ) և հատիկային մշակաբույսեր (հնդկացորեն)
3. Դեղաբույսեր
4. Հատիկընդեղեն մշակաբույսեր
5. Բանջարեղեն և կարտոֆիլ
6. Պտուղ և հատապտուղ

Կենդանական ծագման գյուղատնտեսական հումքեր

1. Կաթ
2. Կենդանի ձուկ, խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ
3. Գյուղատնտեսական կենդանու և թռչնի միս
4. Կենդանու կաշի
5. Կենդանու ճարպ»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Սույն որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49 որոշմամբ ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական հումքերի ցանկը սահմանելու, ինչպես նաև որոշմամբ նախատեսված փոխհատուցումների իրականացման հետ կապված ժամկետները վերանայելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49 որոշմամբ սահմանված է, որ Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական հումք վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից այդ արտադրանքի իրացումից Արցախի Հանրապետության պետական բյուջե վճարած, ինչպես նաև վերամշակման ընթացում օգտագործված՝ Արցախի Հանրապետության տարածք ներմուծված գյուղատնտեսական հումքի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած ավելացված արժեքի հարկի գումարները փոխհատուցվում են, սակայն հստակեցված չէ, թե որոնք են որոշման իմաստով համարվում գյուղատնտեսական հումքեր: Բացի դրանից, որոշմամբ սահմանված է, որ փոխհատուցումներն իրականացվում են մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 10-ը ավելացված արժեքի հարկի գումարի փոխհատուցման համար ներկայացված դիմումների մասով, ինչն խաչընդոտներ է ստեղծում կարգի դրույթների լիարժեք կիրառման համար:

Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին հնարավորություն կընձեռվի ավելացված արժեքի հարկի փոխհատուցում ստանալ այն հաշվետու ժամանակաշրջանի համար, որից չի անցել երեք տարուց ավել ժամկետ, ինչպես նաև կհստակեցվի գյուղատնտեսական հումքի ցանկը, որի վերամշակման արդյունքում արտադրված արտադրանքի իրացման դեպքում վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին փոխհատուցվում է պետական բյուջե վճարված ավելացված արժեքի հարկի գումարը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության, բուսաբուծության և բույսերի պաշտպանության, ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությունների և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ.ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 49-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն
4. ԱՀ ֆինանսների նախարարություն
5. ԱՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

Նախագիծը պատրաստողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

_____

(ստորագրությունը)

«_____» _____ 2018 թ.